**Արձանագրություն N 3**

Ազգային ժողովի 2026թ. կարիքների համար բազկաթոռների և կահույքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-26/13 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման և գնահատման

07.05.2026թ.
ժամը՝ 11:30

ք. Երևան, Բաղրամյան 19

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Վ. Թորոսյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Տ.Ղազարյան*, Վ.Քեռյան, Ա.Դարբինյան, Գ.Ավետիսյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ռ. Հովհաննիսյան |

**Նիստին բացակայում էր հանձնաժողովի անդամ Տ.Ղազարյանը*

### 1. Տեղեկություն՝ հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկման և հայտի գնահատման վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 07.05.2026թ. ժամը 11:30-ին: Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի կողմից իրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկվել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 4, դեմ՝0*

### 2. Տվյալներ՝ ընտրված մասնակցի, անգործության ժամկետի, պայմանագիր կնքելու և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության վերաբերյալ

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ Ընթացակարգի 1-2-րդ չափաբաժինների մասով «Արգավանդ Կահույք» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:

2.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

2.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0*

Հանձնաժողովի

| | | |
|---|---|---|
| Նախագահ՝ | _______________ | Վ. Թորոսյան |
| անդամներ՝ | _______________ | Վ. Քեռյան |
| | _______________ | Ա. Դարբինյան |
| | _______________ | Գ. Ավետիսյան |
| քարտուղար՝ | _______________ | Ռ. Հովհաննիսյան |